

## ԲՆԱԿԱՐԱՆ

Գիւղերում տները սովորաբար շինում են իրենք տնատէրերը, շատ քիչ անգամ մի կամ երկու վարպետ վարձելով. Բարեկամները, մանաւանդ վեսաները, ժամանակ ու ժամանակ զայլս են օգնելու. Տղաները առաջնորդն են թերում պատրաստում, աղջիկներն ու հարսները ջուր կրում և թեթև գործերը կատարում, իսկ հալրը՝ պատերն է դնում և կարգադրում աշխատութեան կարգը. Ցները սովորաբար շինում են կամ զարնանը՝ վարուցանքից լետով, և կամ աշնանը՝ կայն աւարտելիութեանը.

Ախտանում գրեթե բոլոր տները ցեխից են շինուած. Քարշատ տեղերում չկայ. իսկ եղած տեղերումն էլ նրան շինութեան չեն գործածում, մի անգամ ընդունուած սովորութեամբ. Յեխից շինուած տունը դիմանում է մինչև 50 տարի, սակայն երբեմն լորդ և լարատե անձրներից սաստիկ վնասուամ է. սաստիկ անձրներից էլ ճեղքնդքումէ.



Ենութեան համար ցեխը պատիս են պատրաստում:—Դեսինը փորում են և թառոյ որեւէ առուից ջուր են կապում փորուած հողի վրայ. Ազա թիով խառնում ու ձի, կով, եղ թերում, վրան ման են ածում, ալնպէս որ սրանց սաների տակ հողն ու ջուրը շաղախուում ցեխի են կազմում. Հետեւեալ օրը բաներով խառնում են կաւացած ցեխը. եթէ բաւականաչափ պինդ չէ լինում՝ կրկին կենդանիներ են բերում և ման ածում. Արանցից լետով իրենք տղամարդիկն են կոխիստում և ազա կանանց ու հարսներին բորիկ սաներով կոխիստել տալիս. Երբ ցեխը արդէն անգանում է, որ կանալը, առանց մէջը խրուելու, կարողանում են կանգնել վրան՝ ցեխը պատրաստ է համարում. Ումանք ցեխն աւելի պինդ անելու նպատակով հետո մոխիր են խառնում. Յետու բանով նրան կտրատելով՝ սկսում են պատ շարել. Մինչ ալս՝ շինութեան հիմքը փորած են լինում  $\frac{1}{4}-1$  մետր խրութեան և մի մետրից աւելի լայնութեան: Երբ պատը մի մետր բարձրանում է՝ երեք օր սպառում են, որ չորանալ. Յետով նորից ցեխ են պատրաստում և արդ պատի վրայ նոր, դարձեալ նոյն բարձրութեան, միայն փոքր ինչ

նեղ, պատ դնում: Ակսպէս շարունակում են՝ մինչև որ հասնում ենց ցանկացած բարձրութեան, Շէնքը ծածկելուց իմասոյ, Արտաշէ հողից, որ կրապին է և գտնում է առաւելապէս խռնակոթի արճելքան և արևմտեան բլուրներում՝ փոքր քանակութեամբ ցեխ են պատրաստում, հետը գարման խառնելով և ալս անգամ անշուշտ կանանց կոխկռտել տալով: Ցետոյ ալս ցեխով ծեփում են պատերի ներքին, երբեմն էլ արտաքին երեսները և լցնում են ձեղքուած տեղերը: Ակա ալս միննոյն հողից ջրալի շաղախ (շարբաթ) են պատրաստում, հետը մղեղ (լարդի մանրութ) խառնելով, և աւելով և կամ հին գուլզպարով քսում պատին, որ սպիտակի:



Ցնակարանները բազկանում են էջվան, տուն, տան-օնադ և դուադ-օնադ մասերից: Արանց սովորաբար կից, բայց երբեմն էլ հեռու է լինում կէօմը (գոմ):

Որովհետեւ Սիսիանը դաշտալին է՝ այդ պատճառով էլ մի տան կտուր միւսի համար որպէս բակ չէ ծառալում, ալլ իւրաքանչիւր տուն մի բակ ունի, չըջապատած ցեխի պարագով: Եվանը շինում է բակում, կամ տանը կից, կամ առանձնացած: Սա իսկապէս մի պատշգամբ է, որ սովորաբար բակի մասերնեռլթից փոքր ինչ բարձըր է շինում: Հասա անգամ ալս պատշգամբը ճաղեր էլ չէ ունենում: Արա մի անկիւնում օջաղ և կամ թռնիք է լինում, որովհետեւ ամառը ալսուեց են պատրաստում կերակուր, էլզանում քցած են լինում թաղիքներ (քէշաններ), որոնց վրայ նստում են ծաղկապատիկ և զիշերները քնում: Հարուստները ունենում են և մի փալտէ հասարակ մահճակալ, որի վրայ քնում են տան մնենքը: Պատուաւոր հիւր գալիս՝ ալս տեղը նրան են զիջանում: Մի քանի տներ էլ հասարակ վարագույններ են անում էրվանի առաջ, որպէսուզի, արեի ճառապալթներից պաշտպանուին: Ակսպէս ուրեմն՝ տաքեղանակներին բոլոր գերբաստանը ալս էլզանումն է անց կացնում ամբողջ օրը, ցերեկ և զիշեր: Բակումն են զիշերում և անսատները:

Տ անը սովորաբար քառակուսի է լինում, չորս սիւններով, որոնց վրայ ինուում են երկու զերաններ: Ակա երկու զերանների վրայ, երկու ծալբերին ձգուում են երկ-երկու զերան—սլուխակրներ, (երկուորեակ), որոնց ծալբերին, զերանների ուղղութեամբ մի-մի սկերան-ախտպերներո, իսկ սրանց վրայ՝ մի-մի զերագա-ջուխտակրների, (ծառակ երկուորեակ): Սրանց վրայ ձգուում են երկու ուրիշ բարակ զերաններ, որ կոչուում են ասթմա: Պատից զերանների և ջուխտակրների, սրանցից զերան-ախտէրների և զերագա-ջուխտակրների վրայ ձգուում են երկ-երկու բարակ ձողեր, —աթմա—միննանցից մօտ 1/2 մետր հեռաւարութեամբ, որոնց վրայ շարուած են տախ-



2.



3.

48.

Ա. Եղիշե (արտ). Բ. Կոմ. զ. Կամ-օթափ. դ. Հանգ-օթափ: 1. զաղվառ, 2. կոչ, 3. չափաբան:

տակների: Դեմադա-ջուխտակների վրայ լինած աթմաների վրայ ես երկու կողմից տախտակներ են շարուած և մէջ տեղը մի փոքրիկ քառակուսի բացուածք թողնուած (Խորաքանչիւր կողմը 0,35—0,70 մետր) որ կոչում է հերթ (երդիք). Առ է տան միակ պատուհանը, որ ձմեռ գարուն բաց է լինում. Գոզերից զգուշութեան համար երրեմն երդիքի վրայ մի խաչաձև երկաթ են ձգում, որ կոչում է խաչերթ.

Տան բատակը ժեկած է ցեխով, որի հետ խառնած է լարզի մանրուք և մազ, որպէսզի աւելի կայտն լինի: Տան դռան մօտի անկիւնում թաղուած է մի փոքրիկ թոնիր, որ կոչում է օջաղ և ծառալում է առձիռն թեթև բաներ պատրաստելու, այնինչ բռն թոնիրը, որի մէջ թնում են հացը և եփում կերակուրները՝ գտնուում է տան միջավարում, բայց ոչ անմիջապէս կենդրոնում, հերթի տակ, որպէսզի արձրեի ժամանակ թոնիրը չհանգչի: Չմեռը թոնիրի վրայ քուրսի են դնում և շուրջը բալորուած նստում Քուրսին քառակուսի ձեռով, կարճ ոտներով սեղան է, որ դնում են թոնիրի վրայ, երեսին վերաբաներ և կամ կապերաներ ձգում, որոնք ամբողջ սեղանը և թոնիրը ծածկում են և արգելում տաքութիւնը դուրս դալու: Նստելիս բարձրացնում են շորի ծալը, ոտները կախում թոնիրի մէջ և ապա նոյն շորով իրենց կողքերը ծածկում: Ոտները սկսում են տաքանալ, բայց մէջքը տան ցրտութիւնից մրսում է:

Տան խորքում դրուած է լինում ալիւրի ամբարը: Տան մէջ ոչ մի կահաւորութիւն չկար, Յատակին փուռմ են թաղիքներ և երբ հիւր է զալիս ներքնակ ձգում և մի բարձ դնում, որ վրան լինուի:

Մի քանի աներում դռան կողքից մինչև տան կէսը հասարակ տախտակով կտրուած է, որպէսզի դուռը բանալիս քամին սասակութեամբ չի լինէ:

Տ ան-օթախը տանը կից, նրա երկարութեան, բայց նրանից շատ նեղ մի սենեակ է, տափարակ ծածկով, որի մէջտեղում մի հերթ է թողնուած: Այս սենեակը հարուանիքների ժամանակ ծառալում է որպէս հարսի առանձնասենեակ, իսկ ուրիշ ժամանակ առաւելապէս որպէս մատան:

Ղ ուստ-օթախին, որ միայն հարուաներն ունին՝ տափակ ծածկով մի սենեակ է, որի լուսամուտները պատի մէջն են և ոչ կտրին: Հաստ անգամ լատակը տախտակած է լինում և շատ քիչ անգամ՝ նաև առաստաղը: Պատուհաններին ապակու փոխարէն շատ անգամ ձիթած թուղթ է կալցրած, Ակապիսի սենեակներում գտնուում են մի կամ երկու աթոռ և մի սեղան:

Բոլոր սենեակների դռներն էլ մի փեղկանի են, բաւական-

Հաստ փակուից շինուած։ Սաստիկ ծուխից շատերի երեսները սևացնեն։

Ա երջին տարիներս սովորութիւն է զարձած, որ հարուստները փոխանակ մեր նկարագրած ձեմի բնակարաններ շինելու՝ շինում են երկարկանի տներ, իւրաքանչիւր լարկը մնձ մասսամբ մի մնձ և մի փոքր և կամ միայն մի մեծակից բազկացած, և աշխատումն նրանց եւրոպական ձևով կահառորելու Գնում են աթոռներ, սակայն շատ քիչ են գործ ածում, առելի գերազանցելով ծալապատիկ նստել. Առհասարակ նոր բնակարանների վրա զգալի կերպով նկատում է Բագուհ ազդեցութիւնը.